



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Նաիրի Ինշուրանս» ԱՍԴԸ-ի Տնօրենների խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Նաիրի Ինշուրանս» ԱՍԴԸ-ի (Ընկերություն) 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը ներառում է այլ նշում այն մասին, որ ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի կիրառման հնարավորությունը գնահատելու համար որպես վերահաշվարկված համադրելի տեղեկատվության մաս օգտագործվել է Ընկերության 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում ներկայացված 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղեկատվությունը: Ընկերության 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2016թ. ապրիլի 7-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Որպես 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների մեր կողմից իրականացված աուդիտի մաս, մենք աուդիտի ենք ենթարկել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 3-ում ներկայացված ճշգրտումները, որոնք կիրառվել էին 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տվյալները վերահաշվարկելու համար: Մենք չենք իրականացրել 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, դիտարկում կամ որևէ այլ ընթացակարգ նշված ֆինանսական հաշվետվությունների հետ կապված, բացառությամբ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 3-ում ներկայացված ճշգրտումների: Հետևաբար, մենք կարծիք կամ որևէ տեսակի հավաստիացում չենք արտահայտում ընդհանուր վերցված այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, նշված ճշգրտումները տեղին էին և կիրառվել են ըստ պատշաճի:



«Նաիրի Ինշուրան» ԱՄԴ

Անկախ աուդիտորական հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ
Էջ 2

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր հաշվետվության ընթերցումը չի փոխարինում ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված կարծիք աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2019թ. ապրիլի 30-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համա

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (խմբագրված) «Հաշվետվության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ» պահանջների համաձայն:

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ԱՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ԱՊԸ
30 ապրիլի 2019թ.